ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 Ա Վ Ա Գ Դ Պ Ր Ո Ց

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման – Գնահատման տարբեր տեսակների կիրառումը առարկայի դասավանդման ընթացքում

Մասնակից՝ Հռիփսիմե Միքայելյան

Դպրոց՝ «Նորակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2022թ.

Նախաբան

Գնահատումն ու հաշվետվությունը նպատակներ են, որոնք արդարացնում են գործադրված ջանքերը։ Մեր խնդիրն է՝ ստեղծել այնպիսի մի համակարգ, որն արդարացիորեն և արժանիորեն գնահատում է մեր աշխատանքի պտուղները՝ առանց խաթարելու այդ աշխատանքը և ուսումնառության ողջ ընթացքը։

Թեոդոր Սայզըր

Ընթացիկ գնահատման նոր համակրագի ներդրումը պայմանավորված է հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակողմանի փոփոխություններով, կրթության որակը արմատապես բարելավելու և յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու անհրաժեշտությամբ։ Գնահատման գործող համակարգում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումից է նաև որոշակիորեն կախված իրականացվող փոփոխությունների հաջողությունը։ Գործող համակարգը առավելապես բացահայտում է սովորողների մտապահման աստիճանը և չի նպաստում նրաց ճանաչողական կիրառական կարողությունների ու հմտությունների զարգացմանը։ Ընթացիկ գնահատման գործող համակարգը հնարավորություն չի տալիս բացահայտել և հաշվառել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջ բազմազանությունը։ Հետևաբար, սովորողների ուսումնառության իրական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր ու տեսակներ։ Ընթացիկ գնահատման տարբեր ձևերի ու տեսակների կիրառումը, տաս միավորային սանդղակի ներդրումը կնպաստեն ուսուցման գործընթացի բարելավմանը, սովորել ուսուցիչ-ծնող-դպրոց փոխհամագործակցության ապահովմանը։

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը։
Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի.

- Արդարության
- Հուսալիության
- Անկողմնակալության
- Հավաստիության
- Հիմնավորվածության
- Մատչելիության
- Թափանցիկության

սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայինորեն ընդունված գնահատման չափանիշներին։ Սովորողի համար կարելի է առանձնացնել գնահատման հետևյալ

1. Կողմնորոշող
2. Կարգավորող
3. Սանկցիաներ իրականացնող
4. Դասակարգող
5. Սոցիալական

Ժամանակակից մանկավարժությունն առավելապես հակված է հայտնաբերելու և կիրառության մեջ դնելու երեխաների զարգացման, գնահատման և խրախուսման նոր, այլընտրանքային մեթոդներ։ Ունկնդրելու, խոսելու, կարդալու և գրելու ինտեգրված ծրագրերում նոր մոտեցումն ի հայտ է բերում գնահատման նոր եղանակներ, որոնք միտված են աշակերտի ավելի հստակ արժևորմանը։ Դա էլ իրականացվում է մշտապես իմաստավորված զարգացումային նկատառումներին համապատասխան և արտացոլում փաստացի ուսումնառության օգտակար փորձը, որը հնարավոր է արձանագրել դիտարկման, գրառումների աշխատանքային նմուշների, զրույցների հստակ արձանագրությունների և անձնական թղթապանակների միջոցով։

Ուսումնառությունն ու զարգացումը մշտապես փոփոխվող հասկացություններ են։ Հետևաբար մանկավարժները պետք է գործեն գնահատման ոլորտում տեղի ունեցող տեղաշարժերին համընթաց։ Շարունակական գնահատումը, որը կատարվում է դասարանի գործունեության ընթացքում, կարող է ներկայացնել երեխաների ունակությունների և առաջադիմության ճշգրիտ, ճշմարտացի պատկերը։ Գնահատումն ավանդաբար կենտրոնացվել է աշակերտի հաճախակի հաշվետվության վրա՝ օգտագործելով թվանշանով գնահատվող զանազան ստուգափորձեր, աշխատաթերթիկներ, շաբաթական ստուգողականներ։ Ուսուցիչները երեխաների աշխատանքը գնահատելուն հակված են եղել, որպեսզի իրենց, ծնողներին և դպրոցի վարչարարներին ապահովեն աշակերտի առաջընթացին վերաբերող թվային ապացույցներով։ Սակայն կրթության ոլորտում վերջին միտումները հանգեցրին նրան, որ այժմ մանկավարժներն ուսումնասիրում և ստեղծում են երեխաների զարգացումը խթանող ու գնահատող այլ ընտրանքային եղանակներ։ Ճիշտ գնահատումը ի հակադրություն ստուգողականների վրա հիմնված գնահատման, մի այնպիսի եղանակ է, որը շարունակաբար ընթանում է իմաստալից և զարգացողական ուսումնական միջավայրում ։ Այն արտացոլում է արդիական և ուշադրության արժանի ուսուցման փորձը , որը կարող է փաստագրվել դիտումների, դեպքերի գրառումների, օրագրերի, հուշատետրերի, աշխատանքի նմուշների, խորհրդակցությունների, աշխատանքի փաթեթների առաջադրանքների կատարման և այլ եղանակների միջոցով։ Ճիշտ գնահատումն իմաստալից է երեխաների համար և իրականացվում է ուսուցման ընթացքում, քանի որ գնահատումը չափազանց կարևոր է աշակերտների զարգացման համար։ Գնահատման՝ վերջերս ձևավորված պատկերացումները պահանջում են բացահայտել այն, ինչը երեխաները գիտեն և կարող են անել։ Եթե ուսուցիչները ցանկանում են պարզել, թե իրականում ի՛նչ գիտեն և կարող են անել իրենց աշակերտները, ապա նրանք կարիք ունեն նրանց դիտելու առաջադրանքները սովորական պայմաններում կատարելիս, երբ աշակերտները բազմաթիվ հնարավորություններ ունեն իրենց գիտելիքների և հմտությունների ցուցաբերման համար, այլ ոչ թե հիմնվեն սոսկ ստուգողականների վրա։ Գնահատման մոտեցումները պետք է հարմարեցվեն երեխաների զարգացողական բնութագրերին, որպեսզի ապահովվի երեխայի ունակությունների ու նվաճումների ավելի լրիվ և ամբողջական ապացույցը, քան դա կարող են անել ստուգողականների միջոցով հավաքված միավորները։

Գնահատման ընթացքում հավաքված տեղեկությունն օգտագործվում է աշակերտի առաջադիմության և ուսումնական ծրագրի բաղադրիչների ուղորդման նպատակով։

Գնահատման չափանիշները պետք է ներառեն՝

- Հիմնավորվածություն։
- Նվաճումները չափելու բազում եղանակներ, որոնք չեն սահմանափակվում ստանդարտ բազմընտրությունով։
- Երեխայի լրիվ մասնակցություն։
- Կրկնվող դիտումներ։
- Շարունակական գործընթաց։
- Բազմազան եղանակների օգտագործում։

Գնահատման փաթեթն աշակերտի աշխատանքների հավաքածու է, որը ցուցադրում է երեխայի ջանքերը, առաջադիմությունն ու նվաճումները որոշակի ժամանակահատվածում։ Ե՛վ աշակերտը, և՛ուսուցիչը չպետք է մասնակցեն փաթեթի մեջ ընդգրկվող փաստաթղթերի ընտրությանը։

- Գնահատումը պետք է նպաստի երեխայի գիտելիքների ավելավմանը, ընկալմանը և ինքնավստահության աճին։
- Գնահատումը պետք է ուղղված լինի կարևոր նպատակների իրականացմանը։
- Գնահատումը պետք է տեղեկություն տա և աջակցի զարգացմանը համապատասխանող ուսման գործելակերպին։
- Ծնողները և աշակերտները կարևոր գործընկերներ են գնահատման գործընթացում։

Գնահատման վերջնական նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ, որ իրենք իրենց գնահատեն։ Աշակերտն իր զարգացման նպատակով ի վիճակի է մտորելու որոշակի բնագավառում իր առաջընթացի մասին։ Ուսուցիչը պետք է ուղղորդի այդ մտորումները և հարցերի ու քաջալերանքի միջոցով աջակցի դրանց։ Ճիշտ գնահատման նպատակն այն է, որ սովորողին հնարավորություն ընձեռնվի դառնալ անկախ և ինքնուրույն։

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցում գնահատումը իրականացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական և առարկայական, այնպես էլ Միջազգային առարկայական չափորոշիչների և չափանիշների հիման վրա։ Հիշյալ փաստաթղթերը սահմանում են սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման մակարդակը։ Չափորոշիչները շեշտադրում են սովորողների նկարագրի և բարոյական որակների, արժեքային համակարգի ձևավորումը և շարունակական կատարելագործումը։ Դպրոցում գնահատման համակարգը խթանում է սովորողների ուսումնառության գործընթացը։ Սովորողների ձեռքբերած գիտելիքների, կարողությունների գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի անբաժանելի մասն է կազմում։

Արդի շրջանում ազգային դպրոցի գերնպատակն է կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի: Այս ասպարեզում խիստ անհրաժեշտ է իրականացնել հստակ գնահատման համակարգ, որը խթանելու է ուսումնառությունը և նպաստելու է ուսումնառության կատարելագործմանը:

Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների և հստակ գնահատման ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը: Ուսուցման մեթոդները և գնահատման եղանակները դրանք ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման տարաբնույթ մեթոդներ:

Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով աշակերտների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ: Օրինակ դերային խաղը կամ թեզը և ուսուցման, և գնահատման մեթոդ է, աշխատանք գրքով և ուսումնառության, և դասավանդման մեթոդ է:

Դասավանդման, գնահատման և ուսումնառության մեթոդները պետք է.

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը աշակերտների կողմից,
- Կիրառվեն աշակերտների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- Լինեն բազմատեսակ,
- Խրախուսեն աշակերտների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- Համապատասխանեն ուսուցման նպատակներին,

• Ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,

• Աշակերտների և ուսուցիչների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,

Համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, ուսուցիչների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին: Գիտելիքների գնահատման մեթոդներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

•օբյեկտիվությունը,

• ստուգման անհատական բնույթը,

• համակողմանիությունը,

• ստուգման անցկացման ձևերի բազմազանությունը,

• տարբերակված մոտեցումը,

• համակարգայնությունը և կանոնավորությունը:

Գնահատումն ունի հետևյալ չափորոշիչները.

• Նկարագրում են գնահատման առաջադրանքում աշակերտի կողմից կրթականվերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը/ աստիճանը:

• Պահանջում եմ սահմանել և հրապարակել կրթական վերջնարդյունքներիձեռքբերման հնարավոր մակարդակները:

• Կարող են ունենալ տարբեր տեսք, սովորոբար՝ նկարագրական ձևաչափ:

• Պարունակում են համառոտ և հստակ տեղեկատվություն գնահատման տվյալ առաջադրանքում աշակերտի կատարողականի տարբեր մակարդակների վերաբերյալ, ինչը տարբեր գնահատողներին թույլ է տալիս իրականացնելիհիմնավորված գնահատում:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներիցէ աշակերտի ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով այս չափանիշը ուսուցման մեթոդները դասակարգվում են՝ պասիվ ոու ակտիվ մեթոդների:

Ուսուցման պասիվ մեթոդներ

Դա աշակերտների և ուսուցիչների փոխգործունեության ձև է, որտեղ ուսուցիրը հանդես է գալիս որպես հիմնական գործող և ուսումնական գործընթացի կառավարող, իսկ աշակերտները հանդես են գալիս որպես պասիվ ունկնդիրներ: Ուսուցչի կապը աշակերտների հետ իրականանում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի և այլ աշխատանքների միջոցով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ

Դա աշակերտների և ուսուցիչների համագործակցությունն է միմյանց հետ, երբ աշակերտները ուսուցման գործընթացում հանդես են գալիս որպես ակտիվ մասնակիցներ: Այս ուսուցման մեթոդներն ապահովում են աշակերտների արդյունավետ, ստեղծագործական գործունեությունը:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ

Համագործակցություն է զրույցի երկխոսության շրջանակներում, ի տարբերություն ակտիվ մեթոդների, ինտերակտիվ մեթոդները նպաստում են աշակերտների համագործակցությանը ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ:

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, անձնային աճը, ուսումնական գործընթացը և վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողի ներուժի առավելագույն զարգացումը:

Գնահատումը՝

- Թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները:
- Խթանել առարկայի խորը ընկալումը իրական կյանքի համատեքստում իրականացվող հետազոտությունների միջոցով:
- Խթանել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը:

- Հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծելիս և անհատական նախագիծ իրականացնելիս:
- Ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին:

- Ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին:
- Հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ Դասավանդման հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

1. Գիտելիք /աղբյուրներ, պատմական գործընթացներ, քաղաքակրթություն/

2. Կարողություններ ու հմտություններ /վերլուծումներ, եզրահանգումներ,հիմնավորումներ/:
3.Արժեքներ / պատմագիտության հետաքրքրություն, ելույթներ, քննարկումներ:4/ Հիմնական մաս /մտքերի փոխքննարկում/:
5/ Ամփոփում /հարցերի ու առաջադրանքների միջոցով և տնային առաջադրանքներ/:

- Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր,հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթաց է. արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը, խթանում էսովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:
- Արդյունավետ գնահատումը պետք է լինի՝ պլանավորված, հավաստի, համարժեք, անաչառ, արժանահավատ, հուսալի, թափանցիկ1 :
- Գնահատում իրականացնելիս ուսուցիչն իր ուշադրությունը կենտրոնացնում է սովորողների կրթական առաջընթացի վրա՝ կարևորելով ինչպես ողջ գործընթացի, այնպես էլ ստացված արդյունքների որակական կողմը:

3. ԴՊՐՈՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

Դպրոցում կիրառվում է գնահատման երկու տեսակ՝ ներքին և արտաքին

- Ներքին գնահատումն իրականացնում են ուսուցիչները, առարկայականհանձնախմբերը և տնօրենությունը:
- Արտաքին գնահատումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտությաննախարարությունը:
- Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի

- Ա. Գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել սաները:

- Բ. Գրանցում. ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները:
- Գ. Հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկատվությունը կամգնահատման արդյունքները:

Սովորողի ուսումնառության ընթացիկ գնահատման ձևերն են՝ միավորային գնահատումը և ուսուցանող (ձևավորող) գնահատումը

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում(Գծակարգ):

Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

Գնահատման՝սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:

Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին:

Նշանակում է՝ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ուսուցչի, թե՛սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ուսուցչի և՛սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխելդասավանդման մեթոդներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կրթական գնահատումը գիտելիքների վերաբերյալ փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է:Գնահատման տվյալները կարող են ստացվել աշակերտների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից :

Ձեռքբերումը գնահատելու համար կամ կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ:Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստերով:Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող

համայնքի (դասարան, սեմինար կամ սովորողների այլ կազմակերպված խումբ), դասընթացի, ակադեմիականծրագրի, հաստատության կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վրա։

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է։Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը։ Գնահատում բառը կրթական համատեքստում կիրառության մեջ է մտել երկրորդ համաշխարհային

պատերազմից հետո։Կրթականգնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով։Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ։

Կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու

հմտությունների մակարդակը, անձնային աճը, ուսումնական գործընթացը և վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողիներ ուժի առավելագույն զարգացումը։ Գնահատումը՝

•թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները։

•խթանել առարկայի խորը ընկալումը իրական կյանքի համատեքստում իրականացվող հետազոտությունների միջոցով։
•խթանել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը։

•հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծել անհատական նախագիծ իրականացնելիս։
•ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին։
•ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին։
•հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը։

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր, հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթացէ. Արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը, խթանում է սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը: Արդյունավետ գնահատումը պետք է լինի՝պլանավորված, հավաստի, համարժեք, անաչառ, արժանահավատ, հուսալի, թափանցիկ:Գնահատում իրականացնելիս ուշադրությունը կենտրոնացնում է սովորողների կրթական առաջընթացի վրա՝կարևորելով ինչպես ողջ գործընթացի, այնպես էլ ստացված արդյունքների որակական կողմը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի. Ա. Գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել սաները:Բ. Գրանցում. ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները:

Գ. Հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկատվությունը կամ գնահատման արդյունքները:

Գոյություն ունեն գնահատման 2 փոխկապակցված ձևեր՝ձևավորող (ուսուցանող) և միավորային:

- Սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- Ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառուներ կայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունեն անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է

ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ուսուցանող / ձևավորող/գնահատում

Ուսուցանող / ձևավորող /գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործ ընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի

կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդ մանմեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման նպատակն է՝

•բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,

•բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները,

•սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու անհրաժեշտության գիտակցմանը,
•ճշգրտել կիրառվող դասավանդման ռազմավարությունների և մեթոդների նպատակահարմարությունը:

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում.սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը , գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին: Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում

կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ յուրացման / ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչթեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն;

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

- Ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- Ուսուցանող / ձևավորող գնահատում Ուսուցանող / ձևավորող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների,սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն

ընդլայնելու համակարգված գործընթացնէ, ինչպես նաև հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական (Cambridge Assessment;former Ofqual chief executive) գործընթացում տեղեկությունների հավաքագրման կարժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ուդասավանդման մեթոդների բարելավումը:

Ուսուցանող գնահատման նպատակն է՝

- բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը

- բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապվածխնդիրները
- սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելուանհրաժեշտության գիտակցմանը
- ճշգրտել կիրառվող դասավանդման ռազմավարությունների և մեթոդներինպատակահարմարությունը:

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում. սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին: Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ յուրացման / ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն:

Ուսումնական առաջադիմության բարձրացման, արդյունավետ ուսումնական գործընթացի ապահովման նպատակով դպրոցում կարևորվում է ընթացիկ աշխատանքների մշտադիտարկումը, մասնավորապես՝ դասի մասնակցությունը
/ներգրավվածությունը, յուրացման առաջադրանքների կատարումը, պարբերաբար իրականացվող ուսուցանող/ձևավորող աշխատանքների և դրանց անդրադարձի կատարումը:

Դասի ընթացքում կատարված մեկնաբանությունները ոչ միշտ են ընկալելի և կառուցողական: Դիտողությունները/դիտարկումները ոչ միշտ են հիմնավորված և հավասարակշռված, երբեմն–երբեմն բովանդակությունից անկախ են հանդես գալիս անբավարար սանը մեծ դժվարությամբ է հետևում է դասին տրվող հրահանգներին, անուշադիր է, երբ ուսուցիչը / ընկերները ներկայացնում են նոր նյութը կամ իրենց

գաղափարները, առաջադրանքները առանց օժանդակ միջամտության չի կատարում: Դասի ընթացքում կատարված մեկնաբանությունները բովանդակությունից կտրված են, ընկալելի եւ կառուցողական չեն:

Անբավարար սանը մեծ դժվարությամբ է հետևում է դասին տրվող հրահանգներին, անուշադիր է, երբ ուսուցիչը / ընկերները ներկայացնում են նոր նյութը կամ իրենց գաղափարները, առաջադրանքները առանց օժանդակ միջամտության չի կատարում: Դասի ընթացքում կատարված մեկնաբանությունները բովանդակությունից կտրված են, ընկալելի եւ կառուցողական չեն:

Միավորային գնահատման նպատակը սովորողի առարկայական գիտելիքների և դրանց հիման վրա ձևավորված կարողությունների մակարդակի բացահայտումն է:Այն կիրառվում է սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանը ստուգելիս: Միավորային գնահատումն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու և հաշվառելու միջոցով;

Այն ունի վերահսկող դեր, ախտորոշիչ դեր: ՈՒսուցիչը կարողանում է ճշտել ամեն սովորողի ձեռքբերումների որակը և մակարդակը, ապա ըստ այդմ՝ որոշակի փոփոխություններ մտցնել դասավանդման եղանակների, ուսուցման տեխնոլոգիաների և կիրառվող մեթոդների ոլորտում:

Եթե միավորային գնահատման առաջադրանքը կատարելիս սովորողը խախտում է ակադեմիական ազնվության կանոնները (հուշարարություն, արտագրություն ընկերոջից կամ այլ աղբյուրներից), ապա ուսուցիչը նրան զրկում է աշխատանքը շարունակելու իրավունքից և ստանում է նվազագույն միավոր՝ 0 (զրո), նախատեսված բոլոր չափանիշներից՝ առանց աշխատանքը վերահանձնելու իրավունքի:

Խիստ անհրաժեշտության դեպքում, եթե պարբերաբար նկատվում են յուրացման առաջադրանքները չկատարելու կամ թերություններով կատարելու հաճախակի դրսևորումներ, ուսուցիչը իրավասու է ցանկացած ժամանակահատվածում անցկացնելու աշակերտների գիտելիքների կամ կարողությունների ստուգում:

Բոլոր տարիքային խմբերում, որտեղ դասավանդում են 1-ից ավելի ուսուցիչներ պարտադիր է կազմակերպել միավորային աշխատանքների բովանդակության, սանդղակների և արդյունքների ներքին ստանդարտացման գործընթաց՝ ապահովելով չափանիշների համանման ընկալումն ու կիրառումը բոլոր դասարաններում:

Դպրոցի տնօրենությունը և մանկավարժական խորհուրդը մասնակցում է դպրոցական ուսումնա-դաստիարկչական աշխատանքների զարգացման գործընթացին:

- Ուսուցիչը հստակորեն, համագործակցում է առարկայական մյուս հանձնախմբերի ուսուցիչների հետ, ըստ հետազոտական միավորի (unit-planner)՝ կազմում է նպատակային գնահատման առաջադրանքները և դրանց գնահատմանսանդղակները:
    - Ըստ չափանիշների ստուգում է առաջադրանքը և ապահովում հետադարձ կապ. արդյունքները վերլուծում և քննարկում է սովորողների, անհրաժեշտության դեպքում՝ ծնողների, առարկայական հանձնախմբի մյուս ուսուցիչների հետ:
    - Սովորողի առաջադիմության, կարողությունների և հմտությունների (ATL), ձեռքբերումների և բացթողումների մասին ընտանիքին լիարժեք և հավաստի տեղեկություն է տրամադրում:
    - Սովորողի դերը Սովորողներն ակտիվ դեր ունեն գնահատման գործընթացում.նրանք ուսուցման գործընթացի վերլուծություն են անում, հասկացությունների և տարբեր երևույթների վերաբերյալ իրենց ուրույն ընկալումներն են դրսևորում՝ քննադատական մտածողության, ինքնագնահատման և փոխգնահատման կարողությունները զարգացնելու նպատակով:

    Սովորողների ընտանիքների դերը Սովորողների ընտանիքները տեղեկանում են իրենց երեխայի(ների)՝ ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների դրսևորումների մասին: Նրանք ստանում են իրենց երեխայի(ների) անհատական զարգացման և ուսումնական գործունեության վերաբերյալ հավաստի և լիարժեք տեղեկություն՝ դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքներին աջակցելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և հանրակրթության ու կազմակերպման արդյունքները վերահսկելու գործընթաց է Գնահատումների հիմնական նպատակը սովորողների, գիտելիքների և կարողությունների որակների ստուգումն է և ուսման որակի վերահսկումը:

Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է և ապահովում է ուսուցման ընթացքը և ուսումնառության որակը::

Հիմք ընդունելով դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման մոտեցումները, ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները:

Առաջադիմությունը, դժվարությունը, հաշվառումը և վերլուծությունը:

Բովանդակության յուրացումը, շարունակական փուլերի ստուգումն ու գնահատումը:

Գնահատման համակարգված կիրառումը:

Գնահատման չափանիշների հստակեցումը և ուսումնառության արդյունավետությունը:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները:

1/ բանավոր հարցում:

2/թեմատիկ գրավոր աշխատանք:

3/գործնական աշխատանք:

Ուսուցիչները հիմնականում շեշտում են, որ գնահատման այլընտրանքային մեթոդների կիրառումը նույնպես տալիս է իր դրական արդյունքները, ինչը նկատելի է աշակերտների մեջ տեղի ունեցող դրական փոփոխություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ալեքսանյան Կ. Պատմության դասավանդումը ժամանակակից մեթոդ ներով:Գյումրի: 2006:

2. Գյուլազյան Վ. Առուշանյան Լ. Գասպարյան Մ. ՈՒսուցչի ուղեցույց տետր։Երևան։ 2009։
3.. Լալայան Կ. Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակնե։ Երևան2009։
4.Խաչատրյան Ս. Ուսուցման արդյունավետ հնարներ։ Երևան.Ֆրիդրիխ էբերտհիմնադրամ։ Հայաստան։ 2020։

5.Խաչատրյան Ս. Կամուրջներ պատերի փոխարեն։ Անտարես։Երևան։ 2014։ 6.Ղազինյան Գ. Հասարակագիտություն։ 8-9։ ՈՒսուցչի ձեռնարկ։ Երևան։2013։ 7.Ղուկասյան Ա. Հայոց պատմություն։ 8-9։ Ուսուցչի ձեռնարկ։ Երևան։ 2013։ 8.Ղևոնդյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկա։Երևան։ 2001։ 9.Պապոյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկան. դպրոցում, Եր. 2013թ.
10. Гузеев В. В. Методы и организационные формы обучения М. 2001.

11. Гузеев В. В. Педагогическая техника в контексте образовательной технологии.М. Нар. образование, 2001